

ԻՄ ՎԵՐԱՐԿՈՒՆ

Ես մի վերարկու ունեի: Հիմա լաւ չեմ յիշում, թէ ինչպէս էր ինձ հասել, բայց յիշում եմ, որ սրնագոյն էր, սեւ օձիքով:

Երբ առաջին անգամ հագցրին ինձ, ես կորայ նրա մէջ:

–Շատ լաւն է,– մխիթարեց մայրս, վերարկուի թեւերը ծալելով,– մի քանի տարի կը հագնես:

–Գոյնն էլ յարմար է, բոլոր տարիքների համար,– աւելացրեց հայրս:

–Շատ «մութական» է,– սրտիցս խօսեց փոքր եղբայրս: «Մութական» բառը նրա եռամեայ բառապաշարում նշանակում էր սեւ, մուգ, գիշեր, սարսափ...

Ես խեղճ–խեղճ նայեցի ծնողներիս: Նրանք համբուրեցին ինձ ու այդ սրնագոյն վերարկով ես դիմաւորեցի իմ դպրոցական առաջին ձմեռը:

Մինչեւ չորրորդ դասարան հագնում էի իմ սրնագոյնը՝ ամեն տարի թեւքի ծալուածքից մի ծալ բացելով: Վերարկուի փէշերն էլ գետնից կտրուեցին ու կարծես թէ իմ հագով եղաւ:

Սակայն այդ տարի ձմեռնամուտին տօն էր ինձ համար: Ես նուէր էի ստացել գեղեցիկ, թեթեւ ու տաք կիսամուշտակ:

–Շատ է սագում,– հիացել էին ծնողներս ու եղբայրներս,– մանաւանդ, որ աշնանն էլ կարող ես հագնել, ձմռանն էլ: Իսկ երբ փոքրանայ՝ եղբայրներդ կը հագնեն:

Երեք օր ես փայլում էի դպրոցում: Կարծես թէ բոլորն ինձ էին նայում: Գեղեցիկ, մոդայիկ: Եւ ամենակարեւորը՝ ճիշտ իմ հագով:

Այդ չարաբաստիկ օրը դասերից յետոյ գնացի ֆուտբոլ խաղալու: Տուն գնալուց, նանապարհին յիշեցի, որ իմ թանկագին կիսամուշտակը մոռացել եմ ֆուտբոլի դաշտում: Վազեւազ ետ դարձայ՝ ուշ էր: Վերարկուն չկար:

Այդ կորուստն ինձ համար դարձաւ մանկութեանս առաջին լուրջ ողբերգութիւնը: Կարծես կորցրել էի թանկագին ընկերոջ, հարազատի: Տխրում էի յատկապէս այն քանի համար, որ մեր ընտանեկան նեղ կացութեանը վնաս եմ տուել: Զէ՞ որ այդ վերարկուն ես կը հագնեի, մի քանի տարուց՝ միջնեկ եղբայրս, յետոյ էլ՝ փոքրը:

Մի ֆանի շաբաթ յետոյ յանկարծ դպրոցում տեսայ մի տղայի, իսկ հագին՝ իմ սիրելի կիսամուշտակը: Դպրոցում նրան Բլի էին ասում, չգիտեմ ինչու: Շատ վատ էր սովորում Բլին ու խուլիգանի մեկն էր:

Վազեցի ուսուցչանոց ու, մօրս թեւից ֆաշելով, բերեցի ու հեռուից ցոյց տուեցի Բլին ու իմ սիրասուն վերարկուն: Մայրս բարկացաւ ինձ վրայ ու ասաց, որ դա իմ վերարկուն չէ, ու, որ անմիջապէս դասարան մտնեմ:

Ես հագար վերարկուների միջից կը ճանաչէի իմը: Ես վստահ էի, որ դա ի՛մն էր, իմ թանկարժէք կիսամուշտակը:

Մօրս ձեռքը բռնած տուն գնալուց, ես մտածում էի վերարկուիս մասին:

–Մա՛մ, բայց դա իմ վերարկուն էր, ի՛մը: Ես համոզուած եմ,– ու անյուսութիւնից լաց եղայ:

Մայրս կանգնեց, նայեց ինձ, սրբեց արցունքներս ու ասաց.

–Այդ տղան եօթ եղբայր ու քոյր ունի եւ ոչ մի ձմեռ վերարկու չի հագել: Մեզնից խեղճ ապրող մարդիկ էլ կան: Իսկ դու մի վերարկու էլ ունես, չէ՞:

–Մուփակա՞նը,– արցունքների միջից փթա վեր ֆաշեցի ես:

–Մուփականը,– ժպտաց մայրս: –Կարծեմ հիմա նիշտ ֆո հագով կը լինի:

Ես չորս տարի եւս հագայ իմ սեւ օճիֆով սրնագոյն վերարկուն, արդէն ամաշելով, որ թեւերը շատ կարճ են ու փէշերը ծնկներինցս վեր: Բայց ուրախ էի: Ամեն անգամ, երբ տեսնում էի Բլին ու իր եղբայրներին, որոնք հերթականութեամբ հագնում էին իմ սիրելի կիսամուշտակը, նայում էի նրանց մեծ գորովանքով ու բարեբարի անթափոյց հպարտութեամբ՝ կարճ թեւքներս թափցնելով սեւ օճիֆով սրնագոյն վերարկուիս ծակուած գրպաններում:

ԸՆԾԱՆՈՒԷՐ ԱԲՂ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ